Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երեւ-
անի Ա. Ղարիբյանի անվան հ. 142 ավագ դպրոց»
ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրականության (11 դա-
սաժամ), պատմության (11 դասաժամ), հասարա-
կագիտության (11 դասաժամ), ինֆորմատիկայի
(11 դասաժամ), ֆրանսերենի (6 դասաժամ), թուրքերենի (11 դասաժամ), ֆիզկուլտուրայի (11 դա-
սաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած
հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը
կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր
մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում
առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է
ներկայացնել՝
- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող
փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-
րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք
աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի
պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀում աշխատելու իրավունքը հավաստող փաստա-
թուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ
զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ
գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր
(առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու
դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխա-
նատու անձը փաստաթղթերի բնօրինակները հա-
մեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները
վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ
համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ
օգոստոսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը
10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ
ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 30-ին՝

ժամը 11:00-ին, ՀՀ ԿԳՄՍՆ Երեւանի Ա. Ղարիբյա-
նի անվան հ. 142 ավագ դպրոցում, հասցեն՝ ք.
Երեւան, Նոր Նորք 4-րդ զանգված, Գյուլիքեվխյան 33:
Տեղեկությունների համար զանգահարել՝
(010) 63-59-50 հեռախոսահամարով: